Հովհաննես Թումանյան

նամակ Օլգա Մաճկալյանին

Դսեղ—Թիֆլիս

18 $^{9}/_{15}$ 88 ամի, ի Դսեղ

Օլինկա ջան,

Եթե իրավ՝ հոգին է չափում ժամանակը, ապա տարիք են անցել քեզնից հեռանալու օրից: Այս չընդունես իբրև մի ֆրազ, արտաքին կեղծ ծեսերի թելադրություն, այլ իբրև անկեղծ սրտի ձայն և վկայություն: Ես համոզված եմ նույնը և քո կողմից, որը և պետք է մխիթարանք ներշնչե ինձ: Ինչ վնաս հեռավոր տարածությունը, եթե սրտերը մոտ են միմյանց:

Այսքան ժամանակամիջոցում առաջին նամակս եմ ուղղում քեզ և հավատացած եմ, որ նամակիս ուշանալը չպետք է ձգեր քեզ անմիտ կասկածանքների տակ: Բանսարկուների չարախոսություններին չպետք է տեղի տայիր քո սրտում, եթե իրավ նույն սիրտը արձագանք է տված իմ խոսքերին: Եթե իբրև բանական ինձ ճանաչել ես քո սեփական խելքով, էլ ինչո՞ւ պետք է հավատաք ուրիշին:

Ես համոզված եմ, որ դուն կասկած չես տանիլ իմ անազնվության վերա. թող ես խաբված լինեմ, բայց ունենամ իմ սեփական և հաստատ հույսս ու համոզմունքս: Նամակիս ուշանալու պատճառը գաղտնիք չէ հիվանդությունն է, որ դուք ևս գիտեք, փառք աստուծո, և մի քանի հանգամանքներ, որ գալովս կպատմեմ: Օգոստոսի կեսերում հազիվ ելա անկողնուց: Գուցե ասեք՝ հիվանդ ժամանակ ևս կարելի էր նամակ գրել, բայց կսխալվեք՝ անկարելին կարելի դարձնելով[1]:

Ես առողջ եմ և գուցե նամակիս հետ գամ:

Բարևում են հայրս, մայրս և մեր ընտանիքն, պարտավորեցրել են նույնպես բարև հիշելու շատ բարեկամներ:

Քո Հովհաննես Թումանյան

<Հ. Գ.>

Օլինկա ջան,

Հայրիկիդ[2] նամակ գրելու ժամանակ անպատճառ ինձնից բարև կգրես:
Կբարևես և տատիդ ու նրա քույրերին և այլոց:

Հովհաննես